



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ՝ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԻ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎՃԱՐՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 05.02.2014թ. ԹԻՎ 3/8-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի,

քննության առնելով «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշմամբ (**այսուհետ նաև Որոշում**) փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանված է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

Նույն որոշմամբ 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամից պակաս անդամավճարի չափ՝ 4.500 (չորս հազար հինգ հազար) ՀՀ դրամ, սահմանված է Երևան քաղաքից առնվազն 120 (հարյուր քսան) կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակավայրում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանների համար:

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածքներում բնակվող և գործունեություն իրականացնող փաստաբանների համար անդամավճարի ամսական չափի նվազեցման անհրաժեշտությունը բխում է սահմանային

20 փետրվարի 2018թ.

թիվ 4/9-Լ

գոտիների բնակավայրում ոչ սահմանային բնակավայրերի (ներառյալ՝ մայրաքաղաք Երևանի) համեմատությամբ բնակչության քանակի, վճարունակության, այդ թվում՝ փաստաբանական ծառայությունների պահանջարկի ցածր ցուցանիշներով:

Հայաստանի Հանրապետության սահմանային գոտին ձգվում է 9 մարզերի տարածքով (Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի) և, ընդհանուր առմամբ, ներառում է շուրջ 200 բնակավայր (քաղաքային և գյուղական):

Այս պահի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող 1917 փաստաբաններից 467 (փաստաբանների ընդհանուր թվի 24,36%-ը) փաստաբանը բնակվում և փաստաբանական գործունեություն են իրականացնում մարզերում, իսկ մարզային փաստաբանների շուրջ 7%-ը բնակվում և գործունեություն են իրականացնում սահմանամերձ բնակավայրերում:

Պալատի խորհրդի գնահատմամբ անվիճելի է այն հանգամանքը, որ մարզային սահմանամերձ համայնքներում գործող փաստաբաններն, ի տարբերություն Երևան քաղաքում գործունեություն իրականացնող փաստաբանների, օբյեկտիվ պատճառներով պայմանավորված ունեն փաստաբանական գործերով անհամեմատ ավելի քիչ զբաղվածություն, իսկ փաստաբանական ծառայությունների սակագները ցածր են:

Նշված հանգամանքներն ուղղակիորեն ազդում են փաստաբանի վճարունակության վրա, ինչը հաշվի առնելով՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սահմանային բնակավայրերում բնակվող և գործունեություն իրականացնող փաստաբանների համար անդամավճարի չափը սահմանելիս պետք է դրսևորել տարբերակված մոտեցում:

Սույն որոշմամբ սահմանամերձ համայնքներում փաստաբանների անդամավճարի բեռի նվազեցումը նպատակ է հետապնդում նպաստել սահմանային գոտու բնակավայրերում (համայնքներում) փաստաբանների գործարար ակտիվության բարձրացմանն ու փաստաբանական գործունեության զարգացմանը:

Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում, 1.2 ենթակետի նշումից հետո, «և» **շաղկապը փոխարինել ստորակետով, իսկ 1.3 կետի նշումից կետը լրացնել «և 1.4» շաղկապով և թվով.**

2. «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի,

փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման եզրափակիչ մասի 1-ին կետը լրացնել նոր՝ 1.4 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«1.4. Սույն որոշման հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի անդամավճարի չափը սահմանել 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին գրավոր դիմելու պահից:»:

3. Հաստատել և «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշումը լրացնել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը սահմանող հավելվածով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններին՝ Պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

20 փետրվարի 2018թ.
թիվ 4/9-Լ
ք. Երևան